

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ՀԱՄԱՅՆՔ	Շահումյան
ՄԱՐԶ	Լոռի



**1. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ**

Շահումյան համայնքը գտնվում է անմիջապես Վանաձոր քաղաքին կից, Վանաձոր-Դիլիջան մայրուղու 1-ին կիլոմետրի աջ ու ձախ կողմում: Գյուղը կազմավորվել է "Ղամբարանց թալա" կոչվող հանդամասում 1933թ., իսկ ներկայիս գյուղի տարացքում եղել է աղբբեջանական գյուղը՝ "Վարդանյու" անվամբ: "Ղամբարանց թալա" - "Ղամբարանց բացատ", "Վարդանյու" - "Վարդանանք": 1936թ. երկու գյուղերը միացվել են իրար, դարձել մեկ գյուղ, որը կոչվել է "թիվ 6 սովխոզ": Գյուղի հիմնական ուղղությունը եղել է այգեգործությունը և անասնապահությունը: 1936թ. այգեգործական բազայի վրա կառուցվել է պահածոների գործարան և գյուղը վերանվանվել է Շահումյանի անվան սովխոզ-գործարան: Ազգամիջյան հարաբերությունների սրման պատճառով տեղափոխված աղբբեջանցիների փոխարեն 1988թ. վերջերից մինչև 1990թ. գյուղը բնակեցվել է 132 ընտանիք փախստականներով՝ Բաքվից, Սումգայիթից, Շահումյանից բռնագաղթված հայերով, որոնց մի մասը, 1990-ական թթ տեղափոխվեցին Ռուսաստանի Դաշնություն և այլ երկրներ: 1978թ. կառուցվել են բազմահարկ 2 շենքերը, որոնք կարծես գյուղը բաժանում են 2 մասի՝ շենքերից վերև և ներքև: Գյուղը երկրաշարժից տուժել է մասամբ: Ունեցել է երկու քարհանք, 3 քարի մշակման արտադրամաս, որոնք հիմա չեն գործում: Գյուղի կենտրոնում է գտնվում Ստեփան Շահումյանի արձանը, որպես հաճելի հուշ նախկին ԽՍՀՄ-ից: Շահումյան համայնքն ունի 1 միջնակարգ դպրոց, ուր սովորում է 243 աշակերտ և դասավանդող 32 ուսուցիչ: Համայնքում գործում է կրթամարզամշակութային համալիրը, ուր գործում է մանկապարտեզը, համայնքային գրադարանը և համայնքային կենտրոնը՝ երգի, պարի սպորտի, գեղանկարչության, կիթառի և դիլի խմբակներով: Համայնքում գործում է մեկ ամբուլատորիա, որը գտնվում է բարվոք վիճակում: Շենքը վերանորոգվել է Հայաստանի Սոցիալական Ներդրումների Հիմնադրամի կողմից, ունի 5 բուժ. աշխատող:

2014թ-ին ավարտվել է Սբ. Հակոբ եկեղեցու շինարարությունը և Շահումյան համայնքն այսօր իր գիրկն է կանչում ոչ միայն հանգստացող, այլ նաև հավատացյալ և ուխտավոր ժողովրդին:

**2. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ**

Գտնվում է ծովի մակերևույթից 1450-1800մ բարձրության վրա, վարչական տարացքում են գտնվում "Մայմեխ" և "Թեժ լեռ" սարերը՝ 3080 մ-3100 մ բարձրությամբ: Գյուղից վերև "Մայմեխ" սարն է իր սառնորակ աղբյուրներով, "Տաք աղբյուրներ", "Սպիտակ ջուր", "Վառված գոմ", "Սև ջուր", "Հաճարկուտ /Ֆլուստիլու/" հանդամասերով, "Անուշ", "Անգլիսկի ջուր" աղբյուրներով և "Տանձուտ", "Չիչխան" ներկայիս Ղարփի գետերով: Վանաձոր - Դիլիջան տանող մայրուղու 2-րդ կիլոմետրի աջ մասում է գտնվում "Թեժլեռ" հանգրվանը նշանավոր ճամբարով, որը ներկայումս չի գործում: Կանաչապատ անտառներով շրջապատված, գողտրիկ և տուրիստական հրաշալի հանգրվան է Շահումյանը: Մասսայական ծառատնկման միջոցով մասամբ կվերականգվի ծառահատված անտառները և գյուղի գեղեցիկ տեսքը, հանգստյան գոտիները նորից իրենց գրկում կգտնեն ամռան արևից և տապից խուսափած քաղաքաբնակներին:

Կլիման բարեխառն է՝ ձմեռը մեղմ, ամառը՝ զով, տեղումների քանակը առատ՝ մարտ-հուլիս ամիսներին: Վերջին տարիներին ավելացել են բնական արհավիրքները՝ կարկտահարություն, երաշտ, հեղեղումներ և այլն:

**3. ՀԱՄԱՅՆՔԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

Մթնոլորտային տեղումների միջին տարեկան քանակը (մմ)	800
Օդի միջին ջերմաստիճանը հունվարին (°C)	-7:
Օդի միջին ջերմաստիճանը հուլիսին (°C)	+25

**4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Համայնքում ընդգրկված բնակավայրերը և դրանց հեռավորությունը համայնքի կենտրոնից 1.1) 1.2) 1.3)	1 բնակավայր՝ Շահումյան համայնք	
2. Նախկին (ՀԽՍՀ) վարչական շրջանի անվանումը	Գուգարք	
3. Համայնքի հեռավորությունը՝		
3.1) մայրաքաղաքից (կմ)	132	
3.2) մարզկենտրոնից (կմ)	9	
3.3) պետական սահմանից ուղիղ գծով (կմ)	72	
3.4) նախկին շրջկենտրոնից (կմ)	7	
3.5) միջպետական նշանակության ավտոճանապարհից (կմ)	0	
3.6) երկաթուղային կայարանից (առկայության դեպքում) (կմ)	9	
4. Համայնքի բարձրությունը ծովի մակերևույթից (մ)	1495	
5. Համայնքի վարչական տարածքը (քառ. կմ/հա)	84.6889	8468.89
6. Սահմանակից համայնքների անվանումները	Վանաձոր, Գուգարք, Լեյնոնտովո, Հրազդանի Մեղրաձոր համայնք	
7. Համայնքապետարանի էլեկտրոնային փոստի հասցեն	<a href="mailto:shahumyan.lori@mta.gov.am">shahumyan.lori@mta.gov.am</a> <a href="mailto:gyuxshahumyan@mail.ru">gyuxshahumyan@mail.ru</a>	
8. Համացանցային պաշտոնական կայքի հասցեն	shahumyanlori.am	
9. Համայնքի ղեկավարի հեռախոսահամարը	093524717	
10. Համայնքապետարանի հեռախոսահամարը	3-78-97, 384-62	
11. Համայնքի հեռախոսային կոդը	0322	
12. Համայնքում փոստային բաժանմունքի առկայությունը (այո, ոչ)	այո	
13. Համայնքապետարանի փոստային դասիչը	2038	
14. Հաստատված գլխավոր հատակագծի առկայությունը (այո, ոչ)	ոչ	
15. Քաղաքացիների սպասարկման գրասենյակի առկայությունը (այո, ոչ)	այո	

**5. ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱԶՄԸ**

	2018թ.
1. Մշտական բնակչության թվաքանակը	2468
2. Գրանցված ծնունդների քանակը	21
2. Մահացության դեպքերի քանակը	13
3. Ամուսնությունների քանակը	8
4. Ամուսնալուծությունների քանակը	0
5. Տնային տնտեսությունների թիվը	811

6. Ընտանեկան նպաստ ստացող տնային տնտեսությունների քանակը	103
7. Կենսաթոշակառուների քանակը	328
8. Հաշմանդամություն ունեցող անձանց քանակը	118

**6. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԿՐԹԱԿԱՆ, ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

	2018թ.
1. Գրադարանների քանակը	1
2. Արվեստի դպրոցների քանակը	0
3. Երաժշտական դպրոցների քանակը	0
4. Նախադպրոցական հիմնարկների քանակը	1
5. Հանրակրթական դպրոցների քանակը	1
6. Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունների քանակը	0
7. Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը	0
8. Բարձրագույն ուսումնական հաստատությունների քանակը	0
9. Մարզադպրոցների քանակը	0

**7. ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴ**

	2018թ.
1. Համայնքի բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (մ <sup>2</sup> )	46558.7
2. Բազմաբնակարան շենքերի ընդհանուր թիվը	19
3. Բնակելի տների (առանձնատների) ընդհանուր թիվը	592

**8. ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ**

	2018թ.
1. Հողեր, ընդամենը (հա)	8468.89
2. Գյուղատնտեսական նշանակության հողեր (հա)	5732.89
3. Բնակավայրերի ընդհանուր տարածքը (հա)	196.41
4. Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը	647
6. Մանր եղջերավոր անասունների (ոչխար և այծ) գլխաքանակը	10
7. Խոզերի գլուխաքանակը	152
8. Գյուղատնտեսական տեխնիկա	23
8.1 տրակտորներ (քանակը)	13
8.2 կոմբայներ (քանակը)	0
9. Գյուղացիական տնտեսությունների թիվը	778

**9. ԵՆԹԱԿԱՈՒՑՎԱԾՔՆԵՐ**

1. Էլեկտրական ենթակայանների քանակը	10
------------------------------------	----

2. Համայնքում գազիֆիկացման առկայությունը (այո, ոչ)	այո
3. Համայնքում աղբավայրի առկայությունը (այո, ոչ)	ոչ
4. Գերեզմանատան առկայությունը համայնքում (այո, ոչ)	այո
5. Համայնքային ենթակառուցվածքի ճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	20
6. Կոմունալ և ճանապարհաշինական տեխնիկայի առկայությունը	4
6.1 Ինքնաթափ բեռնատար մեքենաների քանակը	2
6.2 Էքսկավատորների քանակը	1
6.3 Թրթուռավոր տրակտորների քանակը	1
6.4 Գրեյդերների քանակը	0
6.5 քանակը	0
6.6 Աղբատար մեքենաների քանակը	0
6.7 Բազմաֆունկցիոնալ կոմունալ մեքենաների քանակը	0
6.8 Վակուումային փոշեկուլ մեքենաների քանակը	0
6.9 Ավտոաշտարակների քանակը	0
7. Համայնքի տարածքով անցնող միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ընդհանուր երկարությունը (կմ)	4
8. Համայնքի տարածքում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի առկայությունը (այո, ոչ) և դրանց քանակը	0
9. Ներհամայնքային երթուղիների առկայությունը (այո, ոչ)	ոչ

**10. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ**

*Համայնքի վարչական բյուջեի եկամուտներ (հազ. դրամ)*

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը եկամուտներ	65698.6	65713.2
2. Հարկային եկամուտներ, ընդամենը այդ թվում՝	8050.2	7505.3
2.1 հողի հարկ	3427.0	2708.8
2.2 գույքահարկ	4623.2	4796.5
3. Պաշտոնական տրանսֆերտներ, ընդամենը	55058.4	22058.4
3.1 դոտացիա	55058.4	22058.4
3.2 սուբվենցիա	0	0
4. Մուտքեր հողի օտարումից	900.0	2350.6

*Համայնքի վարչական բյուջեի ծախսեր (հազ. դրամ)*

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը ծախսեր	65698.6	55227.1

*Համայնքի ֆոնդային բյուջեի եկամուտները (հազ. դրամ)*

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը ֆոնդային բյուջեի եկամուտներ	0	0

**Ֆոնդային բյուջեի ծախսեր (հազ. դրամ)**

	Ընդունված բյուջե	Փաստացի
1. Ընդամենը ծախսեր	3389.2	2308.0

**11. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ**

1. Համայնքապետարանի աշխատողների թվաքանակը, մարդ որից՝	15
1.1 համայնքային ծառայողներ	7
2. Ապարատի պահպանման ծախսերը, ընդամենը (հազ. դրամ)	30754.9
3. Ավագանու անդամների թվաքանակը	7

**12. ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Հիմնախնդիրը	Ակնկալվող լուծումը
Համայնքի կենտրոնական ճանապարհի 2 կմ հատվածի ասֆալտապատում	Ասֆալտապատումը նպատակահարմար է իրականացնել համայնքի 1 փող. սկզբնամասից մինչև եկեղեցի և երկրորդ փողոցի երկայնքով, մինչև 6-րդ փողոցի սկիզբը: Անհրաժեշտ է կատարել ասֆալտապատման աշխատանքներ իսկ ճանապարհի եզրերին կառուցել ջրատարներ: Ծրագրի իրականացման արդյունքում բնակիչները կունենան բարեկեցիկ և հարմարավետ երթևեկության պայմաններ, կերկարացվի թիվ 13 երթուղին, բարեկարգ ճանապարհները կնպաստեն տուրիզմի և զբոսաշրջության զարգացմանը, քանի որ ասֆալտապատ ճանապարհը ձգվելու է մինչև նորակառույց Սբ. Հակոբ եկեղեցի:
Փողոցների լուսավորություն	Ծրագրի իրականացման արդյունքում Շահումյան համայնքի բոլոր առաջնային փողոցները, նրբանցքները և որոշ փակուղիներ կապահովվեն գիշերային լուսավորությամբ: Ծրագրի նպատակն է ապահովել երեկոյան ժամերին բնակիչների անվտանգ տեղաշարժը, ունենալ լուսավորված ու գեղեցիկ համայնք, կենտրոնացված լուսավորման համակարգ:
Գյուղատնտեսության զարգացում	Իրականացնելով «Գյուղատնտեսության զարգացման և կոպերատիվի ստեղծման» ծրագիրը, նախատեսվում է կոպերատիվային շարժման դերի բարձրացում, ժամանակակից բարձր արտադրողական կոմբայնի ձեռք բերում, որի շնորհիվ բերքի կորուստը կկրճատվի և բնակչության եկամուտները կավելանան 20%

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՁՆԱԳԻՐ

	և ավելի: Դաշտամիջյան ճանապարհների վերանորոգում, հեռագնա հողատարածությունների արդյունավետ օգտագործում և խմոցների տեղադրում:
--	--